CA 32-K 220

633.51
Բ-25

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

ԲԱՄԲԱԿԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԲԱՐՁՐ ԲԵՐԲԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. ՎԵԿԱՊԵ-ի (Բ) Անդրյերկրկոմի 1931 թ. մայիսի 22-ը վարոչումը բամբակի մշակման կամպանիայի կազմակերպման յեվ տանելու մասին.

2. Ադրկոմկուսի (Բ) Կենտրոնական Կոմիտեյի վարոչումը բամբակի մշակման կամպանիան կազմակերպելու յեվ տանելու վերաբերմամբ Վ.ԵԿԱՊԵ-ի (Բ) Անդրյերկրկոմի 1931 թվի մայիսի 12-ին կայացրած վարոչումն իրագործելու մասին.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

633.51
Բ-25

AZARNOSP
Բաքու — 1931

28 FEB 2013
19-256

Տպագրված է
„ԱԶԵՐՆԵՇԸ"
տպարանում
Բաքու, Բ.-Մոսկ.
և Կրասնո-Գրեմնեն.
փողոց. անկյունում.

ՀՍՍՌ-Ամ ՍՍՌ
61955-67

Գլավլիտ. 3298 Գրավեր 447 Տիրաժ 2000 Սա. ֆ. Բ8

27 SEP 2010

ԲԱՄԲԱԿԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՅԵՎ ՏԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի 1931 թ. մայիսի 12-ը վորոշումը

I

Անդրկովկասի գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում ունեցած հաջողությունները (մինչև 1931 թ. մայիսի մեկը ԱՍՖՍՀ տնտեսությունների միջին հաշվով 34%-ը կոլեկտիվացրված է, իսկ բամբակային ռայոններում—48%-ը, մեքենա-տրակտորային կայանները հիմնականում ընդգրկել են ամբողջ բամբակային տարածությունը, լայնորեն արմատավորվել են տրակտորային մշակումը և շարքացանը, վորոշ չափով կարգավորվել է ջրային տնտեսությունը և այլն) բոլոր անհրաժեշտ պայմաններն են ստեղծում բամբակի բերքատվությունը բավականաչափ բարձրացնելու համար։

Ներկա տարում Ադրբեջանում բամբակի բերքատվությունը, վոր 1931 թվին 1 հեկտարին յեղել է 4,4 ցենտներ, պետք է միջին հաշվով 1931 թ. բարձրանա 8,5 ցենտների. Հայաստանում՝ 8,0 ցենտներից—11,0 ցենտների. Վրաստանում՝ 3,3 ցենտներից—7,7 ցենտների։ Այդպիսով՝ այս տարի բամբակի բերքատվությունը

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

Ադրբեջանում և Հայաստանում պետք է բարձրանա մինչպատերազմյան մակարդակից։

Անդրյերկրկոմը մատնանշում է, որ մի շարք կուսակցական ու խորհրդային կազմակերպություններ բավականաչափ պարզ չեն պատկերացնում բամբակի բերքատվության բարձրացման վերաբերմամբ դրված խնդիրների բացառիկ տնտեսական-քաղաքական նշանակությունը և բոլշևիկորեն չեն ծավալել մարտական կազմակերպչական աշխատանք, վորպեսզի կոլխոզնիկներին ու անհատական չքավորա-միջակային մասսաներին մոբիլիզացիայի յենթարկեն՝ բերքատվությունը բարձրացնելու համար մղվող պայքարի շուրջը։

Հաշվի առնելով մի շարք թերություններ, վոր կան բամբակային կամպանիայի ընթացքում և կարող են բացասաբար ազդել բամբակի բերքատվությունը բարձրացնելու վրա (ձմեռային արաթի, ցելի և տրակտորային մշակման պլանների չկատարելը, մի շարք տեղերում շարքացանքսի առաջադրությունների վոչ լրիվ կատարումը) Անդրյերկրկոմը պահանջում է բամբակի հետ կապված բոլոր կազմակերպություններից՝ յերեվան բերել ամենամեծ չափի կազմակերպվածություն մշակման կամպանիան տանելիս և հասնել այդ աշխատանքում այնպիսի վորակի ու տեմպերի, վորոնք կարող լինեն ապահովել բերքատվության բարձրացման վերաբերմամբ տրվող առաջադրությունների լիակատար իրագործումը։

II

1. Համարելով, վոր մշակման կամպանիան տանելիս ամենից սուր է բանվորական ուժի հարցը, և հաշվի առնելով, վոր անցյալ տարի բանվորական ուժը մշակման ժամանակաշրջանում միանգամայն անբավարար և ոգտագործվել, Անդրյերկրկոմն առաջարկում է բամբակային ռայոնների բոլոր կուսակցական կազմակերպություններին՝ ուշադրության կենտրոնում դրնել կոլխոզների ու անհատական տնտեսությունների ամբողջ բանվորական ուժի՝ մշակման կամպանիայում լիովին ոգտագործելու խնդիրը։

Այդ ամենալուրջ խնդիրը հաջողությամբ լուծելու համար՝ կոլխոզներում պիտի լիովին իրագործվեն խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները—գործարքի հետևողական իրագործման և մշակման ճիշտ նորմաներ սահմանելու, կոլխոզներում աշխատանքի կազմակերպման հիմնական բարելավման ու կարգավորման, յեկամուտների բաշխման հավասարեցուցիչ մեթոդների վերացման մասին, խստիվ պահպանելով այն սկզբունքը, թե «ով ավելի շատ ու ավելի լավ է աշխատում, նա էլ ավելի շատ է ստանում, ով չի աշխատում, նա էլ վոչինչ չի ստանում»։ Ծավալել մասսայական աշխատանք կոլխոզներում և անհատական տնտեսություններում լայնորեն արմատացնելու սոցմրցումն ու հարվածայնությունը, վորպես մի հզոր միջոց աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, նույնպես և լայնորեն զարգացնել անհատական չքավորա-միջակային տնտեսություններում բամբակի մշակման հասարակական ձևերը (համատարած յելույթներ դաշտերը մշակելու համար, բրիգադների կազմակերպում և այլն)։

Այդ միջոցառումների իրագործումը հիմնականում կարող է և պիտի լիովին ապահովի Ան-

դրկովկասի բամբակային ռայոնները՝ մշակման կամպանիայի ժամանակաշրջանում՝ ռայոնում ունեցած բանվորական ուժով։

2. Սակայն, Անդրյերկրկոմը մատնանշում է, որ Անդրկովկասի հանրապետական և ռայոնական կուսակցական կազմակերպությունները դեռևս բավականաչափ պայքար չեն ծավալել խորհուրդների 6-րդ համագումարի որոշումներն իրագործելու համար. չափազանց դանդաղ են ծավալում գործնական կոնկրետ ամենորյա աշխատանք՝ կոլխոզներում գործարքային սիստեմը արմատավորելու, աշխատանքի կազմակերպման բրիգադային մեթոդի, աշխատանքի հաշվեառը դնելու համար և այլն. մի շարք դեպքերում թերագնահատվում է կուլակային ընդդիմադրությունը՝ համագումարի որոշումներն իրագործելիս. դա լուրջ սպառնալիք է ստեղծում՝ բամբակի բերքատվությունը բարձրացնելու առաջադրությունները կատարելուն։

Անդրյերկրկոմը հատկապես նշում է, որ մի շարք կազմակերպություններ, որոնց վրա պարտականություն է դրված գործնականորեն կյանքի մեջ իրագործել Վ.Կ.Պ.Ե-ի (բ) Կենտկոմի և Վ.Կ.Պ.Ե-ի (բ) Անդրյերկրկոմի դիրեկտիվները բամբակի մասին, մինչև այժմ չեն ապահովել այդ դիրեկտիվների ճիշտ իրագործումը։

Ադրբեջանի Հողժողկոմատն ու Կոլխոզցենտրը բամբակային կոլխոզների համար մշակման այնպիսի նորմաներ են սահմանել, որոնք ոչ միայն դարկ չեն տալիս, այլև հետ են կասեցնում աշխատանքի արտադրողականության բարձրացումը կոլխոզներում, հենց դրանով արհեստական պակաս (դեֆիցիտ) առաջացնելով բանվորական ուժում։ Ադրբեջանի Կոլխոզցենտրը բամբակային կոլխոզներում 1931 թվի համար աշխատանքի առանձին տեսակների գնահատման այնպիսի նորմաներ է սահմանել, որոնք ոչ միայն չեն նպաստում կոլխոզների բանվորական ուժի առաջնահերթ ոգտագործմանը բամբակային դաշտերում, այլև խրախուսում են բամբակի մշակման ավելի լարված մոմենտներում բանվորական ուժի հոսանքը դեպի այլ կուլտուրաների վերաբերմամբ տարվող աշխատանքը։ Անդրհողժողկոմատը և Անդրկոլխոզցենտրը ժամանակին անհրաժեշտ միջոցները ձեռք չեն առել՝ ուղղելու այդ ամենակոպիտ աջ-ոպորտունիստական սխալները։

Մինչև վերջին ժամանակներս ոչ Անդրկոլխոզցենտրը ոչ էլ հանրապետական կոլխոզցենտրերից որևէ մեկը կոլխոզային սիստեմին ցուցմունքներ չեն տվել, թե ինչ կարգով պիտի բաժանվեն դրամական ու հացի ավանսները կոլխոզների ներսում. այդ բանի շնորհիվ մի շարք բամբակային կոլխոզներում այդ ավանսները բաժանվել են անտեսություններին հավասար կերպով, այլ ոչ թե ամեն մի կոլխոզնիկի աշխատանքի քանակի և որակի համաձայն։

Անդրյերկրկոմն առաջարկում է հանրապետությունների Կենտկոմներին, Անդրբամբակկոմին, Անդրկոլխոզցենտրին և Անդրհողժողկոմատին անմիջապես վերանայել բոլոր ցուցմունքները և դիրեկտիվները՝ աշխատանքի կազմակերպման, ավանսները բաշխելու կարգի, մշակման նորմաների ու գնահատությունների վերաբերմամբ և դրանք համապատասխան դարձնել կոլխոզների բանվորական ուժն առաջին հերթին

բամբակի համար ոգտագործելու խնդրին ու կոլխոզի ներսում այնպիսի պայմաններ ստեղծելուն, վորոնք նպաստեն բամբակի բարձր վորակի մշակմանը։

3. Առաջարկել բոլոր կուսակցական կազմակերպություններին ու կոլխոզային սիստեմին՝ վոչ ուշ քան մայիսի 25-ը ավարտելու գործարքի արմատավորման, մշակման նորմաներ ու գնահատումներ սահմանելու, բրիգադներ կազմակերպելու և կոլխոզներում աշխատանքի հաշվեառը դնելու գործը։

Նույն ժամկետին ավարտել կոլխոզներում ամառային ժամանակաշրջանի աշխատանքային պլանների կազմելը. լիովին կարգի բերել ամբողջ ինվենտարը. աշխատանքի զանազան ճյուղերի բրիգադիրներ և պատասխանատու ղեկավարներ ջոկել ու նրանց հատկապես պատրաստել ու հրահանգել։

4. Բամբակային կոլխոզներն ուղարկել 1000 ուսանողից վոչ պակաս՝ հատկապես բացատրելու խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումները, ոգնելու կոլխոզնիկներին՝ գործարքին անցնելու, աշխատանքային պլաններ կազմելու և մշակման կամպանիան անցկացնելու։ Ուշադրություն դարձնել մոբիլիզացիայի յենթարկվող ուսանողներին կոնկրետ կերպով հրահանգելուն և նրանց մանրամասնին կերպով ըստ վորակի ջոկելուն։

5. Մոտակա 10-որյակում 5-10 որյա ուսուցչական հավաքներ կազմակերպել ամեն մի ռայոնում՝ հատկապես հրահանգելով կոլխոզներում աշխատանքը կազմակերպելու և հաշվեառը դնելու հարցերի մասին, գործարքային աշխատանքի անցնելու ձևերի և աշխատանքի բրիգադային մեթոդների, սոցմրցման կազմակերպման, ավանսները բաժանելու մեթոդների մասին և այլն։ Այդ հավաքները տանելու համար հանրապետությունների կենտկոմները պետք է ռայոնները գործուղեն պատասխանատու գործիչներ։

6. Հանրապետությունների կենտկոմները, Անդրաշխժողկոմատը և Անդրկոլխոզցենտրը պետք է կարգավորեն դրսում աշխատանքի գնալու հարցը բոլոր բամբակային ռայոններում՝ մշակման կամպանիայի ժամանակաշրջանում, յելնելով բամբակի մշակումը բանվորական ուժով ապահովելու անհրաժեշտությունից։

7. Իսկապես առնելով, վոր ամառային արոտատեղերը (եյլաղները) քոչելը բավականաչափ ազդում է բամբակային դաշտերի մշակման վորակի վրա, հետևաբար և բամբակի բերքատվության վրա, առաջարկել բամբակային ռայոններում կուսակցական, խորհրդային, պրոֆմիությունական, կոլխոզային և կոոպերատիվ կազմակերպություններին՝ անհապաղ ծավալել լայն մասսայական աշխատանք բամբակաբույծների մեջ (թե կոլխոզնիկների և թե անհատական չքավոր-միջակային մասսաների մեջ), վորպեսզի նրանք իրենց ամբացնեն բամբակի ամառային մշակման ամբողջ ժամանակաշրջանում, կազմակերպելով անասունների միատեղ ուղարկում ամառային արոտները՝ հասարակական հովիվներով։

8. Հաշվի առնելով կանանց աշխատանքի բացառիկ նշանակությունը մշակման կամպանիայում՝ մի շարք միջոցներ պետք է ձեռք առնել լրիվ կերպով գործի քաշելու, առաջին հերթին, կոլխոզներում, նաև լավացնելու կանանց աշխա-

տանքի պայմանները. պիտի կազմակերպել հասարակական սնունդ, ծավալել մանկամսուրները, մանկապարտեզները, մանավանդ պարզ տիպի, և այլն. հանրապետությունների ժողկոմխորհները և Անդրխլոպկոմն անհապաղ պետք է այդ նպատակին անհրաժեշտ միջոցները գտնեն։

9. Անդրհողժողկոմատը և Տրակտորոցենտրը 5 որվա ընթացքում պետք է մշակեն հացահատիկների հավաքման կամպանիան անցկացնելու պլանը, այնպես վոր ամենամեծ չափով բանվորական ուժ ազատվի բամբակի մշակման համար. դրա համար աշխատել, վոր բերքահավաքի կամպանիայում լիովին օգտագործվեն մեքենատրակտորային կայանների տրակտորային պարկը և հնձի ունեցած ինվենտարը։ Ապահովել, վոր ժամանակին ներմուծվեն հնձի անհրաժեշտ մեքենաները ու կալսիչները։

10. Ինկատի առնելով, վոր մի շարք բամբակային ռայոններում մալարիայով հիվանդանալը մեծ քանակությամբ բանվորական ուժ է գործից գցում մշակման ու քաղի կամպանիաների ամենալարված ժամանակները, առաջարկել հանրապետությունների առողջժողկոմատներին վոչ ուշ քան հունիսի 1-ը այդ ռայոններն ապահովելու բժշկական օգնությամբ և մի շարք հակամալարիական ու նախազգուշական միջոցառումներով (ճահճային տեղերը նավթ լցնել, քինինացիա և այլն)։

Անհրաժեշտ համարել, վոր Վրաստանի Առողջժողկոմատն ու Վրաստանի Կարմիր Խաչն անհապաղ կազմակերպեն հատուկ բժշկական օգնություն Ադրբեջանի այն բամբակային ռայոններին, վորոնք յենթակա են մալարիայի։

11. Անդրյերկրկոմը պարտավորեցնում է Անդրսովխոզբամբակին և բամբակային սովխոզների դիրեկտորներին մոբիլիզացիայի յենթարկելու բոլոր ուժերն ու միջոցները՝ սովխոզներում որինակելի կերպով տանելու մշակման կամպանիան, կազմակերպելով օգնություն շրջակա կոլխոզներին ու անհատական չքավորա միջակային անտեսություններին՝ այդ կամպանիան տանելիս։

Աշխատանքի ուղիղ կազմակերպումը, գործարքը հատատապես տանելը, սովխոզների բոլոր տեխնիկական հնարավորությունների 100%-ային օգտագործումը և ինվենտարի օգտագործման մեջ «անդիմության» վերացումը, սոցմրցման ու հարվածայնության հետագա ծավալումը, գործի մեջ աչքի ընկնողներին պրեմիա տալու մեթոդների իրագործումը,—սրանք անհրաժեշտ պայմաններ են սովխոզներում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, բամբակի բերքատվության նորմաների կատարման և գերակատարման համար։

III

1. Հետևյալ ժամկետները սահմանել բամբակի ամառային հիմնական վոռոգումների համար. 1-ին ջուր – հունիսի 5-ից մինչև հունիսի 26-ը. 2-րդ և 3-րդ ջուր—հուլիսի 1-ից մինչև օգոստոսի 15-ը։

Այն ռայոններում, վորտեղ ամառը մի անգամ են ջրում (գլխավորապես հյուսիսային Մուղան)—հունիսի 25-ից մինչև հուլիսի 25-ը։

Հանձնարարել Հողժողկոմատին և Անդրբամբակկոմին 10 որվա ընթացքում սահմանելու և

հրատարակելու բամբակը ամառը ջրելու վերջնական ժամկետները՝ ամեն մի ռայոնի համար առանձին, յելնելով տվյալ ռայոնում բամբակի ցանքը վերջացնելու ժամկետից։

Ինկատի առնելով ջրի ռացիոնալ ոգտագործման բացառիկ կարևորությունը բամբակաբուծության կարիքների համար՝ Անդրյերկրկոմն առաջարկում է կուսկազմակերպություններին սիստեմատիկ, ամենորյա հսկողություն և վերահսկողություն սահմանել վոռոգման ռայոնական պլանների ու ջրոգտագործման ճշգրիտ մեթոդների վերաբերմամբ, անհապաղ ծավալելով քաղաքական ու կազմակերպչական աշխատանք հետևյալ լոզունգով՝ «վոչ մի լիտր ջուր չպիտի ոգտագործվի աննպատակահարմար կերպով»։

2. Հաստատել բամբակի մշակման հետևյալ հիմնական ժամկետները.

1-ին քաղհան փխրացումով, նոսրացումով և շարքերի մշակումով մայիսի 20-25-ից մինչև հունիսի 10-15-ը.

2-րդ քաղհան փխրացումով և շարքերը մշակելով—հունիսի սկզբից մինչև հուլիսի 10-ը.

3-րդ քաղհան փխրացումով—պետք է ավարտվի վոչ ուշ քան հուլիսի 20-ը, յերկրորդ անգամ ջրելուց հետո.

4-րդ և հետագա քաղհանները—ամեն մի ջրելուց հետո։

Հանձնարարել Անդրհողժողկոմատին և Անդրբամբակկոմին 5-որվա ընթացքում ճշտել այդ աշխատանքների սկիզբը և վերջը ռայոնական մասշտաբով ու տալ համապատասխան ցուցումներ տեղերին։

3. Բոլոր ռայոններում բատրակա-չքավորական լայն կոնֆերանսներ տանել մշակման կամպանիայի հիմնական հարցերի վերաբերմամբ, հատկապես առանձնացնելով և ծավալելով մասսայական աշխատանքը կանանց մեջ։

Մեքենա-տրակտորային կայանների գյուղատնտեսական հողամասերում կազմակերպել լայն կոլխոզային կոնֆերանսներ, իսկ մեքենա-տրակտորային կայաններին կից—խորհուրդների հատուկ ժողովներ՝ նվիրված մշակման կամպանիայի հարցերին։

Հանձնարարել հանրապետությունների կենտկոմներին և ռայկուսկոմներին ապահովելու այդ ժողովների դեկուցողների մանրազնին հրահանգումը։

4. Մայիսի 15-ից մինչև հունիսի 1-ը ծավալել մասսայական ագրոտեխնիկական արշավներ գյուղում, այդ արշավների հիմնական աշխատանքը հանձնարարելով Լենկոմյերիտմիության Անդրյերկրկոմին և Կոմյերիտմիության Հանրապետական Կենտկոմներին։

5. Անդրպրոֆխորհուրդը, հանրապետական պրոֆխորհուրդները, մեքենատրակտորային կայանների և բատրակների ու հողագործական սովխոզների բանվորների պրոֆմիությունները պետք է ակտիվ մասնակցություն ցույց տան մշակման կամպանիային, պետք է պրոֆմիութենական մի շարք պատասխանատու գործիչներ ամրացնեն բամբակային ռայոններին՝ ոգնելու ստորին պրոֆմիութենական կազմակերպություններին, պետք է ձեռնարկների շեֆային աշխատանքն ուղղեն տեղերին ոգնելու գծով՝ այդ կամպանիան տանելիս և այլն։

6. Վրաստանի Կոմկուսի (բ) և Հայաստանի Կոմկուսի (բ) կենտկոմները պետք է անհապաղ լավացնեն այդ հանրապետությունների կոլխոզային ռայոնների թուրքական կոլխոզների սպասարկումը՝ հրահանգիչներով և կոլխոզային շարժման ու բամբակաբուծության վերաբերմամբ մասսայական դրականությամբ թուրքերեն լեզվով։

7. Կինոյի և ռադիո-կազմակերպության աշխատանքն առաջիկա ժամանակաշրջանում պետք է ուղղել ժողովրդականացնելու կոլխոզներում աշխատանքի կազմակերպման և բամբակի մշակման կամպանիան տանելու հարցերը։

8. Բոլոր թերթերը՝ անդրկովկասյան, հանրապետական և ռայոնական՝ պետք է անհապաղ լայն կամպանիա սկսեն բամբակի ամառային մշակման հարցերի շուրջը, սիստեմատիկ կերպով լուսաբանելով այդ կամպանիայի ընթացքը։ «Զարյա Վոստոկան» պետք է տեսություններ տա, թե հանրապետական և ռայոնական մամուլն ինչպես է մասնակցում մշակման կամպանիային։

9. Հանձնարարել Անդրբամբակին սահմանելու հատուկ ֆոնդ, որ կոլխոզներին պրեմիա տա՝ ամենից բարձր բերքատվության համար։

IV

1. Միանգամայն անթույլատրելի համարել մի շարք ռայոններում նկատվող դեմոբիլիզացիոն տրամադրությունները՝ կապված բամբակացանի վերջը մոտենալուն հետ. Անդրյերկրկոմն առաջարկում է բամբակային ռայոնների կուսակցական կազմակերպություններին անհապաղ ամենավճռական պայքար մղել դեմոբիլիզացիոն տրամադրությունների դեմ, ինչ ձևով էլ որ նը-բանք յերևան գան. այդ տրամադրությունները հանդիսանում են բերքատվության բարձրացման գործում մշակման կամպանիայի վճռական նշանակության աջ-ոպորտունիստական թերագնահատում։

2. Մինչև հուլիսի 1-ը բամբակային ռայոններում թողնել այն բոլոր գործիչներին, որոնք ուղարկված են կենտրոնական Կոմիտեների և Անդրյերկրկոմի կողմից ոգնելու տեղական կազմակերպություններին՝ բամբակային կամպանիան տանելիս. նրանց ուշադրությունը պետք է կենտրոնացնել բամբակի մշակումը կազմակերպելու վրա։

3. Մշակման կամպանիայի ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում պահպանել անդրկովկասյան, հանրապետական և ռայոնական բամբակային ցանքսակոմիսիաները՝ նրանց վրա դնելով այդ կամպանիայի անմիջական գործառնական ղեկավարությունը։

* * *

Կուլակության պայքարը բամբակի դեմ, նրա ուժեղ ընդդիմադրությունը կուսակցության և խորհրդային իշխանության միջոցառումներին՝ բերքատվությունը բարձրացնելու վերաբերմամբ — պահանջում են բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպություններից ուժեղացնելու դասակարգային զգաստությունը՝ մշակման կամպանիան տանելիս և էլ ավելի համախմբելու կոլխոզային ու չքավորա-միջակային մասսանե-

բին կուսակցության ղեկավարությամբ՝ վճռականորեն հարձակվելու կուլակության դեմ, կոլխոզային շարժման հետագա ծավալման համար, բամբակի բերքատվության բարձրացման վերաբերմամբ տրված առաջադրությունները լիովին կատարելու համար։

ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Բամբակի ժակման կամպանիան կազմակերպելու յեվ տանելու վերաբերմամբ Վ.ԵԿԱ.ՊԵ-ի (Բ) Անդրյերկրկոմի 1931 թվի մայիսի 12-ին կայացրած վորոշումն իրագործելու մասին

1. Ադրկոմկուսի (Բ) Կենտրոնական Կոմիտեն բամբակի ցանքսերի քաղհանի ու փխրեցման մասսայական նախապատրաստության մասին Անդրյերկրկոմի մայիսի 12-ին կայացրած վորոշումը համարում է Ադրբեջանի կազմակերպության մոտավոր աշխատանքի հիմնական ծրագիրը՝ բամբակային ռայոններում։

Ադրկոմկուսի (Բ) Կենտրոնական Կոմիտեն պարտավորեցնում է Ադրբեջանի բոլոր կենտրոնական ղեկավար կազմակերպություններին, ինչպես և բամբակային ռայոնների ռայոնական կազմակերպություններին, անհապաղ այս վորոշումը մանրամասնորեն մշակել կուսակցական-կոմյերիտական ժողովներում, հասցնել ամեն մի գյուղխորհրդի, մեքենա-տրակտորային կայանի, կոլխոզի, կոլխոզնիկի ու անհատականի, իսկ սովխոզներում՝ ամեն մի բրիգադի ու բանվորի, ապահովելով այդ վորոշման իրագործումը գործառնական աշխատանքային պլանների հիմունքներով։

Ակերնեշրը պետք է անհապաղ այս վորոշումն բոլոր լեզուներով հրատարակելն ապահովի մասսայական տիրաժով։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

2. Աղրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեն վճռական կերպով նախազգուշացնում է բոլոր թե կենտրոնական ու թե ռայոնական կազմակերպություններին այն յերեվույթի դեմ, վոր տեղ-տեղ, ցանքսը վերջանալու առթիվ, դեմոբիլիզացիայի հակակուսակցական աջ-ոպորտունիստական տրամադրություններ են յերևում և առանձնապես շեշտում է բամբակի մշակման ու փխրեցման միջոցառումների նշանակությունը, վորպես վճռական միջոցառումներ վորակական ցուցանիշների (պայքար մի հեկտարից $8^1/_2$ ցենտներ բերք ստանալու համար), ապա ուրեմն և՝ ամբողջ բամբակային պլանի իրականացման գործում։

3. Խիստ համապատասխան Անդրյեկրկրկոմի վորոշման՝ ապահովել, վոր սեզոնի ընթացքում մայիսի 15-ից մինչև ոգոստոսի 1-ը բամբակի քաղհան ու փխրեցում լինի։

Առաջարկել Աղրբեջանի ցանքսկոմին, վոր 24 ժամվա մեջ տեղերին հաղորդի յուրաքանչյուր ռայոնի քաղհանի ու փխրեցման ժամկետները։

4. Առաջին քաղհանը ծավալել վորպես մասսայական կամպանիա, գործարքային աշխատանքի հիմունքներով անհապաղ այդ գործին լծելով ամբողջ ռայոնական ու գյուղական ակտիվը, ամրացրվածներին, մեքենա-տրակտորային կայանները, սովխոզներն ու կոլխոզներն, ինչպես և անհատականներին, այնպես, վոր այդ աշխատանքը կատարվի հունիսի 5-ից վոչ ուշ։

Խստիվ հետևել, վոր հաստատուն առաջադրություն ստացած կուլակային-ունևորոր «վերխուշկան» կատարի ագրո-միջոցառումները։

5. Աղրբեջանի ցանքսկոմը պետք է 5 որում հաստատի առաջին անգամ ջրելու ոպերատիվ պլանը և առաջին վոռոգման պլանը յուրաքանչյուր կոլխոզի ու բամբակ ցանողի հասցնելու համար Ազվոդխոզի ու ռայվոդխոզերի կողմից անհրաժեշտ միջոցառումներն ապահովել այնպես, վոր այդ պլանը վերջանա հունիսի 26-ից վոչ ուշ, համաձայն Անդրյերկրկոմի սահմանած ժամկետի։

6. Անդրյերկրկոմի հրահանգը միանգամայն ուղիղ համարելով թե գործարքային աշխատանք մտցնելով ու մշակման ուղիղ նորմաներ սահմանելով՝ կոլխոզների ու անհատական տրնտեսությունների բանվորական ուժերի մոբիլիզացայով ու ոգտագործումով հնարավոր է Աղրբեջանի բամակային ռայոններն ապահովել տեղում յեղած բանվորական ուժով մշակման կամպանիայի ժամանակ։

ա) Առաջարկել Կոլխոզցենտրին, ընկ. Պչելինցևի պատասխանատվությամբ վերանայել ու մայիսի 25-ից վոչ ուշ ամեն մի կոլխոզի հասցնել մշակման նորմաները, այդ նորմաները քննության առնելով կոլխոզների ընդհանուր ժողովներում ու արտադրական խորհրդակցություններում։ Կոլխոզցենտրը 2 որում պետք է կոլխոզներում բամբակի մշակման հրահանգ կազմի, այնպես, վոր 100 %-ով գործարքային աշխատանք մտցնվի, բամբակի արտերի փխրեցման հատուկ բրիգադներ կազմակերպվեն, բրիգադներն ամրացնելով վորոշ հողամասերի մինչև բամբակը մշակելու և հավաքելու վերջը, վերջնականապես լիկվիդացիայի յենթարկելու կոլխոզներում «անդիմությունը»։

բ) Ադրբեջանի ցանքսկոմը պետք է ռայոնների ցուցմունքներ տա՝ ռայոնների ներսում վերաբաշխման, բուքսիր, սոցմրցություն ու հարվածայնություն կազմակերպելու հիման վրա կոլխոզներում, շենային ընկերություններում և ռայոններում բանվորական ուժը մոբիլիզացիայի յենթարկելու և ոգտագործելու գործառնական պլաններ մշակելու մասին։

գ) Ադրբեջանի ցանքսկոմը պետք է գործառնական պլան մշակի՝ աշխատանքի ամենապարված ժամանակ թույլ կետերին լրացուցիչ բանվորական ուժ հասցնելու՝ ուժերն ռայոնների միջև վերաբաժանելու միջոցով։

դ) Աշխժողկոմատը՝ հողագործական սովխոզների միության, բատրակների ու մեքենա-տրակտորային կայանների ու Ադրլենկոմյերիամիության Կենտրոնական Կոմիտեի հետ միասին պետք է լիովին ապահովեն բամբակային սովխոզները բանվորական ուժի կողմից անընդհատ կերպով ժառակարարումն ու ոգնությունը։

յե) Կանանց աշխատանքը լրովին մշակման կամպանիային քաշելու գործը պետք է ապահովել։ Առաջարկել Ժողկոմխորհի կատարման հանձնաժողովին, վոր ստուգի թե ինչպես են իրագործվել բամբակային ռայոններում մսուրներ, մանկապարտեզներ, մանկահրապարակներ և հասարակական սնունդ ծավալելու մասին Կենտրոնական Կոմիտեի կայացրած վորոշումները։ Կատարման ժամանակ 3 որ է տրվում։ Հանձնարարել Ժողկոմխորհին, վոր այդ հիմնարկությունները ապահովի անհրաժեշտ միջոցներով ու շինանյութերով։

Բանվորական ուժերը կազմակերպելու ու տեղերին հասցնելու պատասխանատվությունը կոլխոզային սեկտորում դնել ընկ. Պչախչու վրա, սովխոզային սեկտորում—ընկ. Ասլանովի վրա, անհատական սեկտորում ընկ. Սեյիդ-բեյլիյի վրա։

7. Առաջարկել Հողժողկոմատին և կուսակցության ռայկոմներին, վոր մինչև մայիսի 25-ը մեքենա-տրակտորային կայանների միջոցով մասսայական կուրսեր կազմակերպեն ընդգրկելով 15 հազար բամբակ ցանող (վորոնցից առնվազն 3000-ը կանայք), դաշտերի մշակման տեխնիկայի հետ ծանոթանալու (փխրեցնել, բուկը տալ, քաղհան և այլն համար։

8. Պարտավորեցնել կուսակցական ռայկոմներին ու Կոլխոզցենտրին, վոր մայիսի 22-ից մինչև 25-ը կոլխոզային կոնֆերանսներ գումարեն խորհուրդների 6-րդ համագումարի վորոշումներն ինչ չափով կյանքի մեջ մտցնելու և մշակման կամպանիայի խնդիրների վերաբերմամբ, իսկ 25-ից մինչև 28-ը չքավոր-բատրակային կոնֆերանսներ միջակ բամբակացանների մասնակցությամբ, ցանքսի արդյունքների ու մշակման կամպանիայի խնդիրների առթիվ։

Կենտրոնական Կոմիտեի ագիտմասսբաժինը մի խումբ ընկերներ պետք է ամրացնի ռայոնական կոնֆերանսները վարելուն մասնակցելու համար և զեկուցողների ցուցակը պետք է հաստատի։

9. Առաջարկել Ադրլենկոմյերիամիության Կենտկոմին, Կոլխոզցենտրին, բատրակների ու մեքենա-տրակտորային կայանների բանվորների և հողագործական սովխոզների միությանը, Ռադիոցենտրին, թերթերի խմբագրություններին, վոր ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի վորոշման

հիման վրա բամբակի մշակման կամպանիային սպասարկելու գործառնական պլան մշակեն մինչև մայիսի 20-ը և ներկայացնեն Կենտկոմի ագիտմասսին՝ նայելու։

10. Հանձնարարել Կենտրոնական Կոմիտեի Ագիտմասսբաժնին, վոր կուլտպրոպի ու բարձրագույն դպրոցների հետ միասին 700 ուսանողից վոչ պակաս մոբիլիզացիայի յենթարկի բամբակի կոլխոզներում ու սովխոզներում աշխատելու համար, հատուկ հրահանգումն ապահովել և մայիսի 19-20 վոչ ուշ տեղերն ուղարկել աշխատելու մինչև հուլիսի 1-ը։ Մոբիլիզացիայի յենթարկած ուսանողներին ռայոններին ամրացնել մինչև հուլիսի 1-ը։

Հանձարարել Ժողկոմխորհին, վոր Անդրկովկասյան Ժողկոմխորհի հետ համաձայնեցնի մոբիլիզացիայի յենթարկված ուսանողներին միջոցներով ապահովելու հարցը։

11. Հանձնարարել կուսակցական ռայկոմներին, Հողժողկոմատին ու Լուսաշխի մարմնյան, վոր ռայոններում ուսուցիչների հավաք կատարեն մայիսի 25-ից 30-ը։ Կոլխոզցենտրը 2 որում պետք է Կենտրոնական Կոմիտեի Ագիտմասսի հետ միասին ծրագիր մշակի և հավաքների պատասխանատու ղեկավարներ նշի։

12. Հանձնարարել Հողժողկոմատին ու Կարմիր Կիսալուսնին, համաձայն Անդրյերկրկոմի հրահանգի՝ Վրաստանի Հողժողկոմատի հետ միասին 20 շարժական ջոկատներ կազմակերպել մալարյայի դեմ պայքարելու և մայիսի 25-ից վոչ ուշ ուղարկել բամբակային ռայոնները, բրիգադները բավականաչափ դեղորայքով ու միջոցներով ապահովելով։

Առաջարկել ռայգործկոմներին՝ ջոկատներ կազմելու, ինչպես և այդ ջոկատների տեղերում տանելիք աշխատանքներում լիովին աջակցություն ցույց տան Առողջողկոմատին (փոխադրական միջոցներ, շենք և այլն)։

13. Կենտրոնական Կոմիտեի և ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի բոլոր լիազորները, վոր մոբիլիզացիայի են յենթարկված բամբակի կամպանիան տանելու և կազմկոս. ու պրոֆմբերը թողնել ռայոններում մինչև այս տարվա հուլիսի 1-ը։ Հանձնարարել Կենտրոնական Կոմիտեի Ագիտմասսբաժնին, վոր ստուգի, թե ռայոններն ինչքան են հագեցված մոբիլիզացիայի յենթարկված գործիչներով և թե այդ գործիչներն ինչքան են ոգտագործվում։

14. Արգելել արձակուրդ տալու Հողժողկոմատի, բամբակային կոոպերացիայի, կոլխոզային սիստեմի ու տեղական հողորգանների գծով թե տեխնիկական և թե պատասխանատու այն գործիչներին, վորոնք կապված են բամբակային ամառվա կամպանիային՝ մինչև 1931 թվի բամբակային կամպանիայի վերջը։

15. Առաջարկել Հողժողկոմատին, վոր ներկա վորոշումով պահանջվող աշխատանքները՝ ժամանակին իրագործմանը հետևելն ապահովող՝ ռայոնների գործառնական հաշվետվություն մատցնի։ Արգելել մյուս բոլոր կազմակերպություններին, վոր ստորին որգաններից բամբակի արտերը խնամելու և մշակելու վերաբերմամբ վոչ մի հաշիվ չպահանջեն։

16. Մայիսի 23-ին Ադրկոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեի քարտուղարությունը պետք

19.256
32-К
220

ե Հողժողկոմատի հաղորդումը լսի՝ ներկա վորոշումը կատարելու ընթացքի մասին։

17. Հանձնարարել Աղրբեջանի ցանքսկոմին, պրեմիա սահմանել ռայոններին ու կոլխոզներին՝ քանակական ու վորակական ցուցանիշները կատարելու համար։

Առաջարկել՝ Հողժողկոմատին, վոր հենց այժմ մի շարք ռայոններ ու կոլխոզներ մատնանշի, վորոնք ցանքսը լավ են կատարել, վորպեսզի պրեմիա տրվի մշակման կամպանիայի պլանը իրագործելու համար։

БИБЛИОТЕКА
ИН СТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՀ Ազգային գրադարան
NL0280664